ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«12» 03 2025 թ.
No 002966

**«ՀԴՄ ՇՏՐԻԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՍԼԱՎԻԿ ԴՈԽՈՅԱՆԻՆ**

***(Հասցե՝ Երևան, Ավան, Նարեկացի թղմ., 54 շ., բն. 60)***

Հարգելի՛ պարոն Դոխոյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված և ղեկավարվելով Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել Ընկերության կողմից 2023 և 2024 թվականներին սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ ըստ ամիսների՝ բնեղեն արտահայտությամբ՝ համաձայն Ձևանմուշի (MS Excel ձևաչափով):

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

**8. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:**

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Կատարող՝ Էդիտա Անանյան*
*Մրցակցության վերահսկողության վարչություն*
*Հեռ. (+374 60) 830-840 (203)*



**www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 22 ապրիլի 2025 թվական:**

*Ձևանմուշ*

# ՏԵՂԵԿԱՆՔ

## Ընկերության կողմից 2023 և 2024 թվականներին սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ ըստ ամիսների՝ բնեղեն արտահայտությամբ

| Ամիս | 2023 թվականին սպասարկված ՀԴՄ-ների քանակ (հատ) | 2024 թվականին սպասարկված ՀԴՄ-ների քանակ (հատ) |
|---|---|---|
| Հունվար | | |
| Փետրվար | | |
| Մարտ | | |
| Ապրիլ | | |
| Մայիս | | |
| Հունիս | | |
| Հուլիս | | |
| Օգոստոս | | |
| Սեպտեմբեր | | |
| Հոկտեմբեր | | |
| Նոյեմբեր | | |
| Դեկտեմբեր | | |

Հավելյալ տողերի անհրաժեշտության պարագայում հարկավոր է ավելացնել նոր տող:

*Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել e.ananyan@competition.am և info@competition.am էլ. հասցեներով:

**Ձևանմուշի էկելտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել e.ananyan@competition.am հասցեով՝ նամակի "subject" կամ "тема" դաշտում նշելով "Form" բառը:

ՄՎՎ մասնագետ, Էդիտա Անանյան, (060) 830-840 (203)